

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ս. ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔ

(Ժէ. ԴՐՔ)

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Սուրբ Մակարայ Վանքը կը պահպանուի Կիպրոսի մայրաքաղաքին՝ Նիկոսիոյ հիւսիս արեւելեան կողմը, Քիթինիա-Քարրաս լեռնաշղթային վրայ, 1700 տարեւոյց Միջերկրական Մովէն. — Բակուրյան, Կիպրոս Կղզի, Նիկոսիա, 1903, էջ 91:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Այս յօդուածը կ'ընդգրկէ միայն Ժէ. դարը, իր մասնաւոր կարեւորութեան համար՝ պատմական եւ մշակութային տեսակէտէ: Այս դարուն իրեն Ս. Մակարայ Վանքի Վանահայր եւ Կիպրոսի Հայոց Առաջնորդ ծանօթ եւ հետեւեալները:

1. Վարդան Արեղայ, 1618. — Իր օրով Ս. Մակար կ'այցելէ Գրիգոր Վրդ. Դարանաղցի, եւ կարեւոր տեղեկութիւններ կ'արձանագրէ իր Ժամանակագրութեան մէջ, այսպէս.

«Եւ նաեւ զնացաք ի Կիպրոս, եւ ելեալ յանապատ մի ի միարանա-կաց վանն, որ Սուրբ Մակար ասի, որ էր Խրիսոյ աղղացն, նոքա սպառեւ եւ մեր աղղացն եւ տուեւ, որ կայր անդ ի մեր աղղացն երկու արեղայ, մէկ քահանայ Խաչատուր անուն, եւ որ այժմ վարդապետ է եւ Առաջնորդ Զօղացոցն, եւ միւսն Վարդան մանողոն, որ այժմ քահանայ է, եւ յայժմ ամի եկն ի տեսութիւն մեզ անոից հետէ եւ զնաց զարձեւալ ի վանն, զի նա է հայր վանացն» (էջ 183):

Դարանաղցիի բաժնի թէ Ս. Մակար էր Խրիսոյ աղղացն», կը հաստատուի Կիպրոսի յատին կրօնաւոր Ստեփան Լուսինեանի 1572 թուին գրած աղակերպով, բայց որում «Ղաթիններն ունէին մի եպիսկոպոս, որ կը բնակէր ի Նիկոսիա: Նաեւ, հիւսիսակողման լեռներուն մէջ ունէին մի վանք, Ս. Մակար անունով» (Կիպրոս Կղզի, էջ 94): Գաթիններուն սպառելուն պատճառաւ վանքը արուեւր է Հայոց:

1634 թուականը կը կրէ ծննդայ մը, որ «Յիշատակ է զազանչի մարտեաւան հոգոյն, ի դուռն Սր. Մակարայ» — Կ. Կղզի, էջ 93:

1635ին ստացուած մի հէօճճէթի (կալուածագիր) զօրութեամբ Օսմանեան դատարանը հարկ եւ տուրք վճարելէ ազատ կը թողու «Կէօք Մանասթըր» (Կապոյա Վանքը), ինչպէս որ կը կոչուէր Ս. Մակար, արտաքուստ կապոյա ներկուած լինելուն համար. — Կ. Կղզի, էջ 95:

2. Մեսրոպ Վարդապետ, 1642. — Յիշուած է՝ այս թուականին զբնուած հէօճճէթի մը մէջ, որ կը վերահաստատէ Սուրբ Մակարի Վանքին (Կէօք Մանասթըր) Հայոց սեփական եւ հարկէ ազատ ըլլալը. — Կ. Կղզի, էջ 96-97:

3. Գրիգոր Վրդ. Զուղայեցի, աշակերտ Կեսարացի Խաչատուր Վարդապետի: Վախճանած է 1664ին կամ քիչ առաջ. — Յուլիան Զեւ. Ս. Յակոբեանց, Ե. Հատոր, 1971, էջ 84 եւ 87:

4. Սահակ Քահանայ, վանահայր, 1665.— Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, 1927, Փարիզ, էջ 221, Արշակ Այսօրահեան:

5. Յովհաննէս եպս. Նիկոսիացի, որդի Փիլիպպոսի եւ Հռիփսիմէի, ծնած է 1589ին, Նիկոսիա.— 1668—1673.— Իր օրով նորոգուած է Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցին: Այլ թղթերն Նիկոսիոյ քահանաներն էին տէր Սահակոս եւ տէր Յակոբ.— Բակ., Հայ-Կիպրոս, Անթիքիոս, 1936, էջ 183-186:

1668 թուին Թումա Գողթնացի կու գայ Կիպրոս, կը մնայ հոն մէկուկէս տարի, եւ կը մասնակցի Ս. Աստուածածին եկեղեցիին նորոգութեան.— Կ. Կղզի, էջ 69:

6. Սարգիս Արք. Կիպրացի, Չօլախ, 1675-1695.— «Սորա մականունն Չօլախ վրդ. ասէին, որոյ ձախ ձեռաց երկու մասն կայր փոքրիկ որպէս տրդայի, եւ ոչ զոյր բազուկ այլ կայեալ էր ի թէւն».— Թէոդիկ, Տարեցոյց, 1927, էջ 222:

Սա 1675ին Կ. Պոսոյ մէջ գրել կու տայ Յայտնաւորք մը, եւ կ'ընծայէ «Սուրբ մենաստանին ի ծովածոց կղզին ի Կիպրոս, ի սուրբ յանապատն երկցրա երանեալ եւ երջանիկ սուրբ հօրն մեծին Մակարայ».— Հանդ. Ամս. 1937, էջ 382:

1695ին սրահ մը Միսիթար Արկ. Սերաստացի կը մնայ Ս. Մակարայ վանքին մէջ: Ան բնկերացած էր Կիլիկիոյ Գրիգոր Բ. Պիծակ կաթողիկոսին եւ Յովհան վարդապետին, որ հոն կը ձեռնադրուի եպիսկոպոս.— Կ. Կղզի, էջ 100:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.— Մշակութային կարեւոր կեդրոն մը չէ եղած Ս. Մակարայ Անապատը կամ վանքը: Սակաւ գրիչներ միայն ծանօթ են, որոնք ժէ. դարաւ բնթագքին կատարած են մի քանի ձեռագիրներու բնդօրինակութիւններ, ըստ հետեւեալին:

Ա. Սարգիս վրդ. Կիպրացի.— Ըստ Տ. Սաւալանեանի կողմած Ձեռագրաց Յուշակին, Ս. Յակոբեանց թիւ 1422 ժողովածուն «օրինակեալ է ի Կիպրոս կղզուջ ձեռամբ Չօլախ Սարգիս վարդապետի, ի Սր. Մակարայ Անապատին, ի թիվ. ՌՃԺԲ-ՌՃԺԳ. (1663-1664), ի պատրիարքութեան Աստուածատրոյ եւ պաշտօնատարի խրոյ Նդիապար վարդապետի, եւ յառաջնորդութեան Սր. Մակարայ Ուխտին Գր. վարդապետի Զուգայեցւոյ».— Յուշակ Ձեռ. Ս. Յակոբեանց, Ե. Հատոր, 1971, էջ 84:

Բ. Սարգիս միայնաւոր, գրիչ, 1665-1671, օրինակած է.

1. Աւետարան, 1665ին, «ի յառաջնորդութիւն Ս. Ուխտին Տ. Սահակ քահանայի».— Դիւան Հայոց Պատմ., Ժ. Հատոր, էջ 550, ծնթ. 33:

2. Պարզատումար, 1671ին, «ի դուռն սրբոյն մեծին Մակարայ աստուածամերձ յանապատին եւ միախումբ եղբարցն», իր բազմերախտ հօր՝ Կիրակոս վարդապետի խնդրանքով.— Հանդ. Ամս., 1937, էջ 382:

Գ. Յովհաննէս եպիսկոպոս, որդի Փիլիպպոսի, 1667-1670, օրինակած է,

1. Գիրք Ձեռնադրութեանց, 1667ին: Ըստ յիշատակարանին «եղև ըսկիդրն զրոցս ի անապատս սրբոյ Մակարայ, որ է յամենավայելուչ կղզուջն Կիպրոսի, իսկ աւարտումն ի դուռն Սուրբ Աստուածածնին, որ է ի նոյն կղզուջ ի քաղաքին Լօբօչայ».— Ձեռ. Վենետիկի, թիւ 451:

2. Շարակնոց, 1670ին տարած է Ս. Մակարայ Անտպատին մէջ.—
Կ. Կղզի, էջ 98: Հայ Կիպրոս, էջ 184:

Դ. Ստեփանոս Երէց Ֆռնուացի, Գրիշ, որդի Բարդամայ, 1674-1677,
օրինակած է յաջորդաբար,

1. Աւետարան, 1674ին, «ի յերկիրն Կիպրոսի, ի քաղաքն Լաթաշայ,
ի զուսն Սր. Աստուածածնին և Սր. Սարգսի Չարափարին, և Սր. Մակարա
Անտպատին».— Կիւէսէրեան, Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939, էջ
410:

2. Աւետարան, 1675ին, «ի յերկիրն Կիպրոսի, ի քաղաքն Լաթաշէ,
ի զուսն Սր. Աստուածածնին, և Սր. Սարգսի զինաւորին, ընդ հովանեաւ ա-
մենայն սրբոցն».— Յուլիոս Զեռ. Ս. Յակոբեանց, Չ. Հատար, 1972, էջ 545:

3. Աւետարան, 1676ին, «ի յերկիրն Կիպրոս, ի քաղաքն Լէվթաշէ,
ընդ հովանեաւ Սրբուհի ամէնաւրհնեալ Աստուածածնին, և Սր. Սարգսի Չա-
րափարին».— Հայ Կիպրոս, էջ 196:

4. Աւետարան, 1677ին, «ի յերկիրն Կիպրոսի, ի քաղաքն Լաթաշէ,
ընդ հովանեաւ Սրբուհեայ ամէնաւրհնեալ Աստուածածնին».— Հայ Կիպրոս,
էջ 196-197:

Է. Թումայ Արղ. Բալուցի 1684ին կ'աւարտէ ընդօրինակութիւնը
Յայսմաւորքի մը, ի զուսն Սարգ Մակարայ.— Կիպրոս Կղզի, էջ 99:

Ն. ԱՐՔ. ՆՈՎԱԿԱՆ